

**ԳՈՂՆ ՈՒ ՏԵՐՏԵՐԸ / Հայ ժողովրդական հեքիաթներ, Հատոր VIII / Գուգարք (Լոռի), Լոռու
բարձառ (խոսվածք)**

Մի գող, մի տերտեր իրար հետ գնում են աստծու կուշտը, որ իրանց մեղքերն ասեն,
արդարանան:

Շատ են գնում, թե քիչ, մթնում ա: Սհանք մի գեղում դոնախ են ըլլում, տերտերը գնում ա մի
հարուստի տուն, գողն էլ՝ մի քյասիբի:

Էս գողը տենում ա էս քյասիբ կնիկը պղինձը դրել ա կրակին, դլթղլթալա բան ա էփում:

Ասում ա.— Էս ինչ լավ ա, էսա մի բան կեփի, մի քիչ էլ ինձ կտա, էս էլ կուտեմ:

Սա նստում ա, ճամփա յա պիւրմ, ճամփա, համա էս կնիկը մի բան էլ ա բերում չի:

Ասում ա.— Այ քիրա, բա էսքան վախտը էդ ճաշը էփեց վե՞ չ:

Ասում ա.— Է՛, ախպեր ջան, ի՞նչ ճաշ, ի՞նչ բան, քարեր եմ ածել մեջը ռեխանցը խափել եմ,
ասել եմ կարտոփ եմ էփում ու տհենց էլ սոված սոված քնցրել եմ:

Էս կնգա գրիցը գողի սրտին շատ ա դժար գալի:

Ասում ա.— Ինչ կլի, կլի, սրան պետք ա հարստացնեմ:

Ասում ա.— Այ քիրա, կարա՞ս ասես, ըստի վեր տունն ա հարուստ:

Ասում ա.— Էս, էն, տհե:

Մին-մին մի քանի տուն ա շհանց տալի:

Էս գողը քնում չի, էդ գշեր մի չորս ջվալ ալիր ա բերում, մի չորս ջվալ ցորեն, մի քանի վեչխար
ու էս քյասիբին լավ հարստացնում:

Մի վեչխար էլ մորթում ա, էփում ին, ինքն էլ լավ կուշտ ուտում ա, ռավետը ասում ա.— Էլ էս
աստծու կուշտը չեմ գնալ, էսքան մեղք արի:

Սա ըտիյան եղ ա դառնում, գնում տուն: Տերտերն էլ ռավեղը վեր կենում, իրան ճամփեն
շարունակում, գնում ա հասնում ասծու կուշտը: Հեռվից տենում ա էն գողը աստծու կողքին
նստած:

Ասում ա.— Շան տղի գողը ինձանից շուտ գնացել ա, ընդի արթարացել ա, էլ էս գնամ ի՞նչ
անեմ, մին ա՝ ինձ ընդունիլ չի:

Թող ա անում, եղ գալի, ճմփին գողին տենում ա:

Ասում ա.— Բա դու ամոթ չարի՞ր առանց ինձ գնացիր աստծու կուշտը:

Գողը ասում ա.— Ի՞նչ էս ասում, այ մարդ, էս էլ չի գնացի:

Ասում ա.— Խի՞՞:

Ասում ա.— Սհե-սհե բան արի, եկա եղ:

Նոր սրանք երկուսն էլ իմանում են, որ իրան արածը աստծուն դուր ա եկել ու իրան արած
լավութենի միար աստծու աչքին լավ ա ըլլել ու աստո՞ծ նրա մեղքերին թողութին ա արել: